

«Գնումների և կատեգորիայի մենեջեր»:

Աշխատանքի նկարագրություն

«Ալֆա Ֆարմ» Ընկերությունն աշխատանքի է հրավիրում փորձառու, ակնհայտ դրսևորված անալիտիկ ունակություններով, մարքեթինգային և վաճառքների կառավարման գիտելիքներով մասնագետի՝ Ընկերության առանձին ապրանքային ուղղությունների՝ կատեգորիաների կառավարման, գնային քաղաքականության որոշման և վաճառքների առաջխաղացման ու պլանավորման համար: Կատեգորիայի մենեջերը նաև կապող օղակ է հանդիսանալու մատակարարների և կազմակերպության միջև:

Աշխատանքային պարտականություններ

- Իրականացնել շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն՝ պարզելու առկա ապրանքատեսականին և գնառաջարկները, պատրաստել շուկայական պայմանների և շուկայում ընկերության դիրքի վերաբերյալ հաշվետվություններ,
- Ստեղծել վստահելի և փոխշահավետ հարաբերություններ մատակարարների հետ՝ գնային քաղաքականության խելամիտ և արդյունավետ որոշման համար, ձեռք բերել համագործակցություններ նոր մատակարար ընկերությունների հետ, բանակցությունների միջոցով ձեռք բերել ընկերության համար լավագույն պայմաններ մատակարարներից,
- Մշտապես բարելավել ու վերանայել մատակարարներից գնման կարգերը և պայմանագրերը՝ ըստ Ընկերության գործող քաղաքականության, մշակել գնումների իրականացման և գնի վերահսկման քաղաքականություններ և ընթացակարգեր,
- Մասնակցել ապրանքների գների ձևավորմանը՝ ելնելով ընկերության գնային քաղաքականությունից ու առկա վերլուծության արդյունքներից,
- Իր կատեգորիայի շրջանակներում կատարել վաճառքների վերլուծություններ

Պահանջվող հմտություններ

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության և մարքեթինգի ոլորտում
- Վաճառքների կազմակերպման և խթանման հմտություններ ու գիտելիքներ,
- Տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
- Բանակական և որակական վերլուծություններ անելու ունակություն,
- Որոշումներ կայացնելու և օպտիմալ լուծումներ առաջադրելու ունակություն,
- Մարդկանց հետ շփվելու, բանակցություններ վարելու միջանձնային հմտություններ,
- Հաղորդակցության գրավոր և բանավոր գերազանց հմտություններ,
- Կազմակերպչական հմտություններ՝ ժամանակի պլանավորման և վերջնաժամկետների պահպանման,
- MS office փաթեթի գերազանց իմացություն,
- Թիմերի կառուցման, մոտիվացման, առաջնորդման և աշխատանքի մեջ ներգրավելու ունակություն:

Դիմելու ընթացակարգ

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացնել կայքում կցված դիմում/հայտը կամ կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@alfapharm.am էլ. հասցեին՝ նամակի թեմայի դաշտում նշելով «Գնումների և կատեգորիայի մենեջեր»:

Ուղարկված բոլոր ինքնակենսագրականների գաղտնիությունը երաշխավորվում է: